## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ XXXI ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

*2010 թ. հուլիսի 28-30-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում տեղի ունեցավ երիտասարդ արևելագետների XXXI հանրապետական գիտական նստաշրջանը:*

*Լիագումար նիստը բացեց Արևելագիտության ինստիտուտի երիտասարդ արևելագետների խորհրդի նախագահ* Սոնա Գրիգորյանը*: Ողջույնի խոսքով հանդես եկան ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս* Վլադիմիր Բարխուդարյանը *և Արևելագիտության ինստիտուտի տնօրեն* Ռուբեն Սաֆրաստյանը**:**

*Այնուհետև լսվեցին մի շարք զեկուցումներ (նիստի նախագահ՝* Ս. Գրիգորյան*): Առաջին զեկուցող պ. գ. թ.* Հ. Խորիկյանը *(ԱԻ) քննեց պատմահայր Հերոդոտոսի XIV սատրապության էթնիկական կազմի շուրջ արված գրառումները: 1948 թ. Իսրայել պետության ձևավորման վերաբերյալ թուրքական մամուլի ունեցած արձագանքին անդրադարձավ պ. գ. թ.* Ք. Մելքոնյանը *(ԱԻ):* Գ. Վարդանյանը *(ԱԻ) զեկուցումում ներկայացրեց ալավիների կրոնական համակարգի որոշ առանձնահատկությունները: Մերձավոր Արևելքի արդի հիմնախնդիրներին էլ անդրադարձավ պ. գ. թ.* Գ. Գևորգյանը *(ԱԻ)՝ «Պաղեստինյան հարցի կարգավորման «Ճանապարհային քարտեզը» և Եգիպտոսը» խորագրով զեկուցման մեջ:*

*Լիագումար նիստի ավարտից հետո գիտական նստաշրջանը բաժանվեց երկու առանձին նիստերի: Առաջինում, որը նվիրված էր իրանագիտությանը (ինստիտուտի նիստերի դահլիճ, նիստի նախագահ՝ պ. գ. թ.* Գ. Իսկանդարյան*), ելույթ ունեցավ* Ա. Կիրակոսյանը *(ԵՊՀ) «Հարկային համակարգը Իրանում Իլխան-Հուլաղուների օրոք» թեմայով:* Մ. Սահակյանը *(ԱԻ) ներկայացրեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Իրանում Ադրբեջանի Ժողովրդավարական կուսակցության ստեղծման նպատակը և վերջինիս Ատրպատականում իրականացրած գործունեությունը:* Ռ. Ազրոյանը *(ԱԻ) «Հակամիապետական իսլամական հեղափոխության սոցիալ-քաղաքական և գաղափարական նախադրյալների ստեղծումը Իրանում XX դարի 70-ական թթ.» և* Ն. Միրզախանյանը *(ԱԻ)՝ «Տարածաշրջանում Իրանի դերի կարևորումը և ԱՄՆ-ի դիրքորոշումը 1970-ական թթ.» իրենց զեկուցումներում անդրադարձան 1970-ական թվականների Իրանի ներքին և արտաքին քաղաքականությանը: Իրանագիտության բաժնում հնչած զեկուցումներից հետաքրքրաշարժ էր նաև* Մ. Բաղդասարյանի *(ԱԻ) «Մեյյեդ Ալի Խամենեի քաղաքական կերպարը» խորագրով ելույթը:*

*Նույն օրը Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնում իր աշխատանքները սկսեց թուրքագիտությանը նվիրված՝ երկրորդ նիստը (նիստի նախագահ՝ պ. գ. թ.* Վ. Տեր-Մաթևոսյան*): «Մոթուն Շանյունը օղուզական ցեղերի նախա-*

*հայր» զեկուցումով հանդես եկած* Շ. Այվազյանը *ներկայացրեց, թե որտեղից էին ծագում օղուզները և ովքեր էին նրանց նախնիները:* Ն. Մինասյանը *(Հայկական պետական մանկավարժական համալսարան, այսուհետև՝ ՀՊՄՀ)՝ զեկուցումում, անդրադարձավ, թե «թուրքական մոդելի» գաղափարը ինչպես է իրականացվել Կենտրոնական Ասիայի թուրքական հանրապետություններում: Թուրքերենի առանձնահատկություններին նվիրված ուշագրավ զեկուցումներով հանդես եկավ* Հ. Ասատրյանը *(ԵՊՀ) («Ներկա ժամանակների դրսևորումները թուրքերենի արևմտյան խմբի բարբառներում») և* Լ. Խաչատրյանը *(ԵՊՀ) («Թուրքական լեզուների ներքին փոխազդեցությունների շուրջ»):*

*Հուլիսի 29-ին գիտական նստաշրջանն ունեցավ չորս նիստ: Առաջին նիստը՝ «Արաբագիտություն» խորագրով, կայացավ ինստիտուտի նիստերի դահլիճում (նիստի նախագահ՝ պ. գ. թ.* Ա. Առաքելյան*): Ա.* Դավթյանի *(ԵՊՀ) զեկուցումը նվիրված էր Աբու Կասիմ Իբն Ասաքիրի «Դամասկոսի պատմությունը» աշխատության մեջ տեղ գտած ճարտարապետական շինությունների նկարագրության հասարակական մտքի վրա թողած ազդեցությանը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի կառավարության ձեռքում հայտնված արաբ ազգայնականներին վերաբերող փաստաթղթերի լուսաբանմանն անդրադարձող զեկուցումով հանդես եկավ* Ա. Բեդրոսյանը *(ԱԻ):* Ն. Մարգարյանը *(Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտ, այսուհետ՝ ՀՑԹԻ) քննության ենթարկեց 1915 թ. Հայոց ցեղասպանությունից հետո Սիրիայում ապաստանած հայերի ինտեգրման դժվարին գործընթացը:* Վ. Անդրեասյանը *(ԵՊՀ) «Զանգիների հարաբերությունները ոչ մուսուլմանների հետ» զեկուցմամբ հանգամանորեն ներկայացրեց Զանգիների ունեցած վերաբերմունքը տարբեր ազգության պատկանող ինչպես զիմմիների, այնպես էլ ֆրանկների, Եդեսիայի հայության, հրեաների և ասորիների նկատմամբ:* Վ. Պողոսյանը *(ԵՊՀ) խոսեց Երուսաղեմի Հայոց պատրիարքության ներկայումս ունեցած հիմնախնդիրների մասին, հատկապես անդրադառնալով Իսրայելի կողմից պատրիարքության կալվածքների պետականացման փորձերին, հայ ու հույն պատրիարքությունների միաբանների միջև եղած տարաձայնություններին: Բելգիայում մուսուլմանական համայնքների հիմնախնդիրներին էր նվիրված* Վ. Հովսեփյանի *(ԵՊՀ) զեկուցումը: «Սպայական վերնախավը Սիրիայի բանակի կազմավորման շրջանում (1946-1948 թթ.)» խորագրով զեկուցում կարդաց* Հ. Սամսոնյանը *(ԱԻ), որում մատնանշեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սիրիական բանակի կազմավորման գործում սպայական բանակի կատարած մեծ դերը: Արաբերենի առանձնահատկություններին էր նվիրված* Է. Խաչատրյանի *[Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան, այսուհետ՝ ՌՀ(Ս)Հ] հաղորդումը:*

*Գիտական նստաշրջանի երկրորդ նիստը տեղի ունեցավ Թուրքիայի բաժնում և նվիրված էր օսմանագիտությանը (նիստի նախագահ՝* Տ. Մանուկյան*): Վ.* Հարությունյանը *(ԱԻ) դիտարկեց ալևիների վերաբերյալ հայկական աղբյուրներում եղած հիշատակումները:* Կ. Շիրոյանի *(ԱԻ) զեկուցումը վերաբերում էր հայտնի թուրք տարեգիր Ահմեդ Ջևդեթ փաշայի «Թեզաքիր» աշխատության մեջ XIX դ. կեսի Սսի կաթողիկոսության պատմությանն առնչվող գրառումներին: Օսմանյան*

*կայսրությունում քրիստոնյա հպատակների իրավական հիմնախնդիրներին էր նվիրված* Ա. Քարտաշյանի *(ԵՊՀ) զեկուցումը («Օսմանյան կայսրության ոչ մուսուլման հպատակների իրավական հիմնախնդիրները իսլամի դիտանկյունից»): Ուշագրավ զեկուցումներով հանդես եկան նաև* Գ. Վարդանյանը *(ՀՅԹԻ) («Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունում հույն բնակչության թվաքանակի խնդիրը»),* Ե. Հարությունյանը *(ՌՀ(Ս)Հ) («Սնծովյան նեղուցների հիմնահարցն Առաջին համաշխարհային պատերազմից հետո») և* Ա. Ալավերդյանը *(ՀՅԹԻ) («Ազգային փոքրամասնությունների դեմ ուղղված քեմալականության դրույթների մշակումը Էրզրումի և Սվազի 1919 թ. համաժողովներում»):* Տ. Ղալթախչյանը *(ՀՅԹԻ) «Արևմտահայ մամուլը «Մամուլի ազատության» և գրաքննության վերահաստատման շրջանում» զեկուցման մեջ հանգամանորեն ներկայացվեց, թե ինչպես է 1908 թ. Օսմանյան կայսրությունում սահմանադրության հռչակումով վերացված գրաքննությունը դրսևորվել արևմտահայ մամուլի կյանքում:*

*Երրորդ նիստն ընթանում էր «Գրականություն, Արևելյան ժողովուրդների գրական հուշարձաններ» ընդհանուր խորագրի տակ (Իրանի բաժին, նիստի նախագահ՝ բ. գ. դ.* Ա. Կոզմոյան*): Առաջինը նիստում զեկուցումով հանդես եկավ բ. գ. թ.* Տ. Պետրոսյանը *(ԵՊՀ), որը ներկայացրեց XIX դարավերջին սուլթան Աբդուլ Համիդ II-ի բռնապետական վարչակարգի օրոք ծնունդ առած, զարգացած և իր վախճանն ապրած «Սերվեթ-ի ֆյունունի գրականությունը» խորագիրը կրող գրական ուղղությունը: Թուրք արձակագիր Օրհան Փամուկի ստեղծագործություններում գույների խորհրդապաշտական նշանակությունն իր զեկուցման մեջ դիտարկեց* Ա. Ոսկանյանը *(ՀՅԹԻ): Ուշագրավ զեկուցումներով հանդես եկան նաև* Մ. Գրիգորյանը *(ԵՊՀ) («Բարոյականության չափորոշիչը Ղուրանում»),* Ա. Թամրազյանը *(ԱԻ) («Հոգևոր կատարելագործման ուղին հայ միջնադարյան միստիցիզմում և սուֆիզմում») և* Գ. Գրիգորյանը *(Մարտին Լութերի համալսարան, Գերմանիա, Հալլե) («Ալեքսանդրիայի պատրիարք Տիմոթեոս Կուզի եթովպերենով պահպանված նամակը երեխաների մահվան մասին»):*

*Գիտական չորրորդ նիստը, որը կրում էր «Հին Արևելք» ընդհանուր խորագիրը, նվիրված էր Առաջավոր Ասիայի հնագույն ժամանակաշրջանին (Հին Արևելքի բաժին, նիստի նախագահ՝ պ. գ. թ.* Ռ. Ղազարյան*): Հին Արևելքի պատմության առանձին հիմնահարցերի շուրջ զեկուցումներով հանդես եկան* Ա. Զաքյանը *(«Էթնոս» գիտահետազոտական կենտրոն) («Առաջավոր Ասիայի մարտական կլոր վահանները և դրանց զուգահեռները Վանի թագավորությունում») և* Մ. Բաղալյանը *(«Էթնոս» գիտահետազոտական կենտրոն) («Խալդի: Ուրարտուում միաստվածության զարգացման վերականգնման փորձ»):* Ռ. Ցականյանը *(ԱԻ) իր զեկուցման մեջ անդրադարձավ Ասորեստանի վերջին արքաներից մեկի՝ Աշուրբանապալի կառավարման վերջին տարվան: «Բիայնիլի-Ուրարտուի ուրարտագիտական մի շարք հարցերի լուսաբանումը Ն. Ադոնցի աշխատություններում» խորագրով զեկուցման մեջ* Ս. Գրիգորյանը *(ԱԻ) դիտարկեց Ն. Ադոնցի «Հայաստանի պատմություն» աշխատությունը, որում ամենուրեք առկա են ուրարտական ժամանակաշրջանին վերաբերող հետաքրքիր դատողություններ, ուրարտական ար-*

*շավանքների երթուղիների ճշգրիտ կանխագծումներ, մի շարք երկրների վերաբերյալ պարզաբանումներ: Հաշվի առնելով, որ ուրարտական ճարտարապետությունը ստեղծել է տաճարային կառույցների մի շարք ձևեր, որոնք պեղումներից գտնված օրինակներից բացի, հայտնի են նաև սեպագիր աղբյուրներից* Ն. Երանյանը *(ԵՊՀ) իր զեկուցման մեջ պատմահամեմատական վերլուծության ենթարկեց Մուծածիրի տաճարը:*

*Հուլիսի 30-ին գիտական նստաշրջանը շարունակեց իր աշխատանքը: Առաջին նիստը (նիստի նախագահ՝ պ. գ. թ.* Ա. Հարությունյան*), որը ընթացավ ինստիտուտի նիստերի դահլիճում՝ նվիրված էր Հեռավոր Արևելքի երկրների քաղաքական, ռազմական և տնտեսական բնագավառներին: Այս նիստում ուշագրավ զեկուցումներով հանդես եկան* Ն. Մկրտչյանը *(ՀՀ պաշտպանության նախարարություն) («Հնդկահայ գաղութը 20-րդ դարում»),* Ա. Հարությունյանը *(ԱԻ) («Չին-եգիպտական ռազմաքաղաքական համագործակցության շուրջ») և* Ե. Հարությունյանը *(ԱԻ) («Քաղաքական և տնտեսական հարաբերությունները Ճապոնիայի և Քուվեյթի միջև»):*

*Երկրորդ նիստում հնչած ելույթները վերաբերում էին Թուրքիայի նորագույն պատմությանը և հատկապես մեծ ուշադրություն դարձվեց արդի փուլին (Թուրքիայի բաժին, նիստը նախագահել է պ. գ. թ.* Ք. Մելքոնյան*):* Ա. Մելքումյանը *(ԱԻ) իր զեկուցման մեջ ներկայացրեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստամբուլահայ համայնքում ծագած հիմնախնդիրները, հատկապես շեշտը դնելով Կ. Պոլսի հայոց պատրիարքի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանի գործունեությանը:* Լ. Բագրատյանը *(ԵՊՀ) ներկայացրեց Թուրքիայում ապօրինի բնակություն հաստատած և փախստական անձանց խնդիրները: Իսկ* Կ. Խոջայանը *(ՌՀ(Ս)Հ) «Եվրոպայում Թուրքիայի ժողովրդագրական քաղաքականությունը Ֆրանսիայի օրինակով» զեկուցման մեջ դիտարկեց թուրքերի զանգվածային արտագաղթը դեպի Ֆրանսիա: Վերջին տարիների թուրք-սիրիական բարիդրացիական երկողմանի հարաբերությունների զարգացման վերաբերյալ խոսեց* Ա. Սարգսյանը *(ԵՊՀ):*

*Երիտասարդ արևելագետների XXXI հանրապետական գիտական նստաշրջանի եզրափակիչ նիստը կայացավ հուլիսի 30-ին (նիստի նախագահ՝* Ա. Հովհաննիսյան*): Այն կրում էր «Ցեղասպանությունը և Հայկական հարցը» ընդհանուր խորագիրը:* Ա. Մկրտումյանը *(ՀՊՄՀ) «Ն. Պ. Իգնատևը և Հայկական հարցը Ադրիանապոլսի զինադադարից մինչև Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիր» զեկուցման մեջ անդրադարձավ Հայկական հարցի շուրջ 1878 թ. ընթացած քննարկումներում ռուս դիվանագետ Ն. Պ. Իգնատևի ունեցած դերին:* Ա. Ալեքսանյանը *(ՀՅԹՐ) «Ցեղասպանություն և սեռասպանություն (գենդերոցիդ)» զեկուցման մեջ գենդերոցիդը դիտարկեց որպես ցեղասպանության բաղկացուցիչ մաս:* Հ. Ադամյանը *(ՀՊՄՀ) «Տերությունների վերջին բանակցությունները Հայկական հարցի շուրջ (ըստ թուրքական մամուլի)» զեկուցմամբ ներկայացրեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Հայկական հարցի վերաբացման հետ կապված՝ խորհրդա-թուրքական հարաբերությունն-*

*րում ծագած ճգնաժամը:* Հ. Գրիգորյանը *(ՀՅԹԻ) «Մշակութային մոդելները» որպես ամբոխի վարքի կազմակերպման ազդակներ Հայոց ցեղասպանության համատեքստում» զեկուցման մեջ փորձեց հիմնավորել, որ ոչ թե մշակույթը կամ բնազդն է ձևավորում վարքը, այլ «մշակութային մոդելներն» են ազդակներ, գրգռիչներ բնազդի արթնացման համար:* Ա. Գրիգորյանի *(ՌՀ(Ս)Հ)՝ «Հայոց ցեղասպանության հարցը Գերմանիայի թուրքական համայնքի օրակարգում» թեմայով զեկուցման մեջ լուսաբանվեցին Հայոց ցեղասպանության ճանաչումը կանխելու ուղղությամբ Գերմանիայի թուրքական համայնքի կողմից ձեռնարկած քայլերը:*

*Նույն օրը՝ հուլիսի 30-ին տեղի ունեցավ երիտասարդ արևելագետների XXXI հանրապետական գիտական նստաշրջանի փակումը: Գիտաժողովի վերջում ինստիտուտի տնօրեն Ռ. Սաֆրաստյանը ամփոփեց գիտական նստաշրջանի արդյունքները:*

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ